



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**



Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից, խորհրդակցական կարգով գործող ՀԶԾ կառավարման հանձնաժողովի կողմից

**Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու « _____ » « _____ » որոշմամբ**

ԱՇՏԱՐԱԿ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....	5
I. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	8
1.1 Ժողովրդագրություն.....	11
II. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ.....	14
2.1 Համայնքում գործող կազմակերպություններ.....	15
2.2 Կրթական հաստատություններ.....	18
2.3 Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ.....	19
2.4 Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ.....	19
2.5 Զբոսաշրջություն.....	19
III. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԵՐ.....	21
3.1 Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմ.....	21
3.2 Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը.....	26
3.3 Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը.....	27
3.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	28
3.5 Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն.....	29
IV. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ.....	30
4.1 Քաղաքաշինության և կոմունալ տնտեսություն.....	30
4.2 Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում.....	45
4.3 Հողօգտագործում.....	46
4.4 Գյուղատնտեսություն.....	46
4.5 Բնություն և շրջակա միջավայրի պահպանություն.....	48
4.6 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն.....	48
V. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	49
5.1 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	50
Համայնքի զարգացման տեսլական.....	50
5.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	54
5.3 ՀՀԶԾ ֆինանսավորում.....	55
5.4 ՀՀԶԾ մոնիթորինգ.....	55
5.5 Եզրափակում.....	55

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՁԾ	Համայնքի զարգացման ծրագիր
ՀՏՁՌ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն
ՀՏՁՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԱԱ	Համախառն ավելացված արժեք
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՎՋԵԲ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԷԵԲՊՆ	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ԿՁԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկություններ զարգացման ազգային կենտրոն
ՄՁՌ	Մարզի զարգացման ռազմավարություն
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԳԾ	Տարեկան գործունեության ծրագիր
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՁ	Տարածքային զարգացում
ՏՁՌ	Տարածքային զարգացման ռազմավարություն
ՏՁՀ	Տարածքային զարգացման հիմնադրամ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2022-2026 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Աշտարակ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ զբոսաշրջության, արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Աշտարակ համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2022-2026թթ. ՀԶԾ-ն:

Համայնքի 2022-2026թթ. ՀԶԾ-ում ներառված են Աշտարակ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶԾ-ն ներառում է նաև Աշտարակ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն՝ Աշտարակ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Աշտարակի

բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում Աշտարակ միավորված համայնքի կազմում են գտնվում (1 քաղաքային և 34 գյուղական բնակավայրեր), Աշտարակ, Ագարակ, Աղծք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմաղբյուր, Բյուրական, Դպրևանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եղեսիա, Նոր Երզնկա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Վերին Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով բնակավայրերը, որի արդյունքում բնականաբար փոխվել են համայնքի մարտահրավերները:

Փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձվել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՁԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀՀՁԾ-ի 1-ին բաժնում - Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք՝ ներկայացվում է համայնքի զարգացման տեսլականն առաջիկա 5 տարիների համար, զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտները, համայնքի հիմնական պրոբլեմները, զարգացման խոչընդոտները և դրանց ծնող պատճառները, ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացը և դրա մասնակցային բնույթը:

ՀՀՁԾ-ի 2-ին բաժնում - Համայնքի իրավիճակի նկարագրություն՝ ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը:

ՀՀՁԾ-ի 3-րդ բաժնում - Նպատակների սահմանում և գործողությունների պլանավարում՝ սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և սույն ՀՀՁԾ-ի հիմնական նպատակները: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀՀՁԾ-ի 4-րդ բաժնում - ՀՀՁԾ ֆինանսավորում՝ ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

Ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

ՀՀԶԾ-ի 5-րդ բաժնում - ՀՀԾՁ մոնիթորինգ՝ ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀՀԶԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀՀԶԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Սիրով ողջունում եմ Աշտարակ համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց ովքեր հետաքրքրված են Աշտարակ համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով, այս հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի ինականացմանը, հասարակական կյանքի ակտիվացման գործնթացներին:

Ինչպես արդեն գիտեք, կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում Աշտարակը, Ագարակը, Աղծքը, Անտառուտը, Ավանը, Արագածոտնը, Արուճը, Արտաշավանը, Բազմաղբյուրը, Բյուրականը, Դպրևանքը, Լեռնարոտը, Կարբին, Կոշը, Ղազարավանը, Նոր Ամանոսը, Նոր Եղեսիան, Նոր Երզնկան, Ոսկեհատը, Ոսկեվազը, Սաղմոսավանը, Սասունիկը, Վերին Սասունիկը, Տեղերը, Ուշին, Ուջանը, Փարպին, Օհանավանը, Օրգովն ու Օշականը միավորվում են, որի հետևանքով ստեղծվում է նոր վարչական միավոր՝ Աշտարակ խոշորացված համայնք:

Վերջին տարիներին Աշտարակ քաղաքում կատարված մեծածավալ աշխատանքները կշարունակվեն արդեն խոշորացված համայնքի մյուս վարչական շրջաններում: Այսուհետ մեր բոլորի նպատակը պետք է լինի ապահովելու մեր համայնքի բնականոն զարգացումը, այն դարձնել առավել բարեկեցիկ, անվտանգ և ապահով համայնքի բնակիչների, հյուրերի, զբոսաշրջիկների և յուրաքանչյուր այցելուի համար: Կատարվող փոփոխությունները պետք է տեսանելի լինեն յուրաքանչյուր բնակավայրում, յուրաքանչյուր մարդու համար:

❖ **Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են**

Ես և իմ թիմը պատրաստ ենք առաջնորդել մեր համայնքն առաջիկա հինգ տարիներին և ներկայացնում ենք համայնքի զարգացման մեր ռազմավարական ծրագիրը:

Մեր նպատակն է, բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների, համայնքի ենթակառուցվածքների հետևողական բարելավման ճանապարհով և կանաչ տնտեսության

սկզբունքները ներդնելով, ապահովել համայնքի կայուն զարգացումը՝ այն դարձնելով բարեկեցիկ, մրցունակ և գրավիչ ներդրումների համար:

Հաշվի առնելով համայնքի մեջ ներառվող բնակավայրերի ներուժը՝ պետք է ձգտենք տնտեսական, կրթական և զբոսաշրջային աշխուժացմանը, որի համար պետք է մշակենք և իրագործենք համայնքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը միտված ծրագրեր:

Համայնքային տնտեսության բոլոր ոլորտների բնականոն զարգացումը, գործարարության և ներդրումների հոսքի խթանումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը, հանգստի գոտիների ստեղծումը, մշակութային և սպորտային ենթակառուցվածքների բարելավումը առաջիկա հինգ տարիներին լինելու են իմ և մեր թիմի գործունեության հիմնական ուղենիշները: Առաջնահերթ է նաև միջազգային համագործակցության ընդլայնումը, քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացումը:

Վճռական ենք լուծելու համայնքի առաջ ծառայած բոլոր խնդիրները՝ սպասարկելով բնակչության կենսական շահերը, բարելավելով համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակը և հասանելիությունը: Այս համատեքստում մշտապես աշխատել են և շարունակելու են աշխատել «Համայնքի յուրաքանչյուր բնակչի խնդիրը՝ դա համայնքապետարանի խնդիրն է» սկզբունքով՝ ինձ համար նպատակ սահմանելով Աշտարակ խոշորացված համայնքը դարձնել կայուն զարգացող, դրանում ներառված բոլոր բնակավայրերի համար հավասար հնարավորություններ ապահովող ուժեղ համայնք:

Այս նպատակներն իրագործելու համար մեր թիմն ունի ձեզնից յուրաքանչյուրի աջակցության կարիքը: Ձեր վստահության քվեի շնորհիվ մենք կկարողանանք ունենալ սոցիալապես ավելի պաշտպանված, տնտեսապես ավելի աշխույժ, ավելի կանաչ ու ավելի հյուրընկալ համայնք:

Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել ինչպես նախկինում Ձեր քննարկմանն ու հավանության արժանացած իմ նախընտրական ծրագիրը, այնպես էլ պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լուսնների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

❖ **Աշտարակ համայնքի տեսլականը**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2022-2026թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2026 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:

Աշտարակը ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր սոցիալ-տնտեսական, կենցաղային, հոգևոր-մշակութային խնդիրները գտնում են իրենց լուծումը, մարդիկ ապահովված են աշխատանքով և համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը, ինչպես նաև լրացնելու իր գիտելիքների, հմտությունների և փորձի պակասը:

❖ **Ծրագրի կարգախոս**

Ուժեղ համայնք, հավասար հնարավորություններ, կայուն զարգացում:

**Հարգանքով՝
Համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյան**

I. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Աշտարակ համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում: Երևան մայրաքաղաքից 20 կմ հյուսիս-արևմուտք, Աշտարակը գտնվում է Քասախ գետի ափին, ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա, Արարատյան դաշտի և Արագածի լեռնազանգվածի

կենտրոնում, Հայաստանի չափանիշներով ունի բարենպաստ կլիմա: Ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ է: Համայնքով են անցնում՝ Երևան-Վանաձոր, Երևան-Գյումրի, Վանաձոր-Էջմիածին տանող մայրուղիները:

1996թ-ից Արագածոտնի մարզկենտրոն դարձած Աշտարակը հանրապետության միջին մեծության քաղաքներից է և զարգացել է որպես Երևան քաղաքի արբանյակ քաղաք: Այն մարզի վարչաքաղաքական, տնտեսական, գիտական ու կրթամշակութային կենտրոնն է:

Աշտարակի, որպես Երևանի արբանյակի հիմնական աճը պայմանավորված է լինելու Երևան քաղաքի աճով, այստեղ արդեն իսկ նկատվում են Երևանում սպասարկում, իրացում իրականացնող ձեռնարկությունների առկայությունը, որոնք օգտագործում են առկա գնային տարբերությունները, տեղափոխելով որոշ գործառույթներ Աշտարակ քաղաք:

Աշտարակ համայնքը իր հնամենի բնակավայրերով հիշատակվում է հայկական աղբյուրներում IX-րդ դարից, այդ են վկայում համայնքի բնակավայրի տարածքում գտնվող բոլոր բրոնզեդարյան արձանները, բնակատեղիները, դամբարանները և այլ հուշարձանները:աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ: Աշտարակը իր բնակավայրերով իր ուրույն տեղը ունի Հայաստանի գյուղատնտեսության, արդյունաբերության և հատկապես զբոսաշրջության տեսակարար կշիռի մեջ:

Կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում Աշտարակ միավորված համայնքի կազմում են գտնվում (1 քաղաքային և 34 գյուղական բնակավայրեր), Աշտարակ, Ագարակ, Աղձք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմաղբյուր, Բյուրական, Դպրևանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եդեսիա, Նոր Երզնկա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Վերին Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով բնակավայրերը, որի արդյունքում բնականաբար փոխվել են համայնքի մարտահրավերները:

Վերջին տարիներին Աշտարակ քաղաքում կատարված մեծածավալ աշխատանքները շարունակվում են արդեն խոշորացված համայնքի բոլոր վարչական շրջաններում: Մեր նպատակը պետք է լինի ապահովելու համայնքի բնականոն զարգացումը, այն դարձնել առավել բարեկեցիկ,

անվտանգ և ապահով համայնքի բնակիչների և յուրաքանչյուր այցելուի համար: Կատարվող աշխատանքները պետք է տեսանելի լինեն յուրաքանչյուր բնակավայրում, յուրաքանչյուր մարդու համար:

Զարգացման ծրագրի կենսունակությունը ապահովելու համար հաշվի են առնվել համայնքի մարդկային ռեսուրսները, առկա միջոցները, որոնք կարող են ապահովել ամբողջական գործողությունների պլանը: Աշտարակ համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացումը շատ կարևոր է համայնքի զարգացման համար:

Զարգացման հիմնական ոլորտներ

Տնտեսական հնարավորություններ

Աշտարակ համայնքի տնտեսության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը իր բաղադրիչներով:

Համայնքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունն է կանխադրյալի վերամշակման և գինու հումքի ստացման կետեր: Քասախի գեղատեսիլ կիրճը ծառայում է որպես հանգստի գոտի:

Համայնքը նախկինում հանդիսացել է Հայաստանի գիտագետագոտական կենտրոններից մեկը, այստեղ են գործել բազմաթիվ գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություններ, որոնց մեծ մասը ներկայումս չի գործում: Զգործող ձեռնարկությունների տարածքների օգտագործումը հանդիսանում է ինչպես խնդիր դրանց մաշվածության աստիճանի աճի հետ մեկտեղ, այնպես էլ հնարավորություն այդ տարածքների շահագործմամբ լուծելու համայնքի հետագա զարգացման խնդիրները, մասնավորապես զբաղվածության մակարդակի բարձրացմամբ: Ներկայումս համայնքի տնտեսությունում էական դեր ունի գյուղմթերքի վերամշակող արտադրությունը:

Օգտակար հանածոներ: Օգտակար հանածոները բազմազան չեն, բայց պաշարները մեծ են: Դրանք հիմնականում հրաբխային ապարատեսակներին են՝ բազմագույն տուֆերը, բազալտը, հրաբխային խարամը, որոնք իրենց գոյությամբ պարտական են Արագած լեռան հրաբխային ժայթքումներին և ծառայում են որպես որակյալ շինանյութ: Տուֆի, բազալտի, ավազի և խարամի հանքավայրերը հիմնականում շահագործվում են:

Հաշվի առնելով համայնքի մեջ ներառվող բնակավայրերի ներուժը՝ պետք է ձգտենք տնտեսական, կրթական և զբոսաշրջային աշխուժացմանը, որի համար պետք է մշակենք և իրագործենք համայնքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը միտված ծրագրեր:

Կատարված ուսումնասիրության հիման վրա մշակվել են առաջարկությունների փաթեթներ, որոնք ուղղված են ինչպես ոլորտները կարգավորող օրենսդրական դաշտի բարելավմանը, այնպես էլ մատուցվող ծառայությունների՝ բնակիչների կարիքներին համապատասխանեցմանը:

Աշտարակ համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ կրնդգրկվի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, «Ապետական բյուջեից սուբվենցիայի ստացման ծրագրային հայտերի ցանկում: Սուբվենցիայի ստացման ծրագրային հայտերը սահմանաձև կարգով կհամաձայնեցվեն համապատասխան միջգերատեսչական

հանձնաժողովում և ստանալով դրական եզրակացություններ, կհաստատվեն Աշտարակ համայնքի ավագանու կողմից:

Ծրագրի իրականացման և գնահատման աշխատանքներին մասնակցել են՝ համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ոլորտների, հասարակական և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այս ծրագիրը հասցեագրում է Աշտարակ համայնքի բոլոր բնակավայրերը:

Համայնքի զարգացման տեսլականով նախատեսվում է՝

Աշտարակ համայնքում ունենք ենթակառուցվածքների նոր համակարգեր, վերականգված, արդիականացված և զարգացող ոլորտներ՝ մառանային գինեգործություն, ավանդական հացատներ, հյուրատներ, և գյուղմթերքի վերամշակող ընկերություններ:

Համայնքում զարգանում է զբոսաշրջությունը, գինեգործությունը, գյուղմթերքի վերամշակումը, ինչպես նաև գիտահեն արտադրությունը:

- ✓ Աշտարակ խոշորացված համայնքը դարձնել կայուն զարգացող, դրանում ներառված բոլոր բնակավայրերի համար հավասար հնարավորություններ ապահովող ուժեղ համայնք:
- ✓ Ամենօրյա հետևողական աշխատանքի շնորհիվ ապահովել համայնքի սանիտարական բարվոք վիճակը՝ աղբահանությունն իրականացնելով թարմացված տեխնիկայով:
- ✓ Բարելավել միջհամայնքային և քաղաքային երթուղիների կազմակերպման և սպասարկման որակը, իրականացնել այն թարմացված ավտոպարկով:
- ✓ Շարունակել խոշորացված համայնքի ասֆալտապատման աշխատանքները:
- ✓ Աշտարակ խոշորացված համայնքը դարձնել 100%-ով լուսավորված:
- ✓ Աջակցել համայնքի գազաֆիկացման գործընթացին:
- ✓ Շարունակել համայնքի շուրջօրյա ջրամատակարարման ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքները, ջրամատակարարումը փուլային հասցնել 24 ժամյա ռեժիմի:
- ✓ Իրականացնել ոռոգման ցանցի ընդլայնման և արդիականացման աշխատանքները՝ ջուրը հասանելի դարձնելով յուրաքանչյուր հողակտորի:
- ✓ Ապահովել համայնքի բոլոր վարչական շրջանները խաղահրապարակներով:
- ✓ Վերագործարկել բոլոր այն մանկապարտեզները, որտեղ կարող է լինել 20 և ավելի երեխաների հաճախելիություն: Թարմացնել մանկապարտեզների և մասնագիտացված դպրոցների նյութատեխնիկական բազան:
- ✓ Օժանդակել համատիրություններին բազմաբնակարան շենքերում նորոգման աշխատանքներ կատարելու հարցում:
- ✓ Հետևողականորեն իրականացնել այն ծրագրերը, որոնք կնպաստեն համայնքի բնապահպանական խնդիրների լուծմանը՝ ավելացնել կանաչապատ տարածքները:
- ✓ Խթանել գյուղատնտեսության զարգացումը, աջակցել գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը համայնքում:
- ✓ Հնարավորինս ակտիվացնել համայնքի բնակիչների մասնակցությունը համայնքի խնդիրների քննարկմանն ու լուծմանը:

- ✓ Աջակցել այն քաղաքացիներին և իրավաբանական անձանց, որոնք նախաձեռնություն կդրսևորեն զարգացնելու փոքր և միջին բիզնեսը:
- ✓ Ակտիվացնել համայնքի սպորտային կյանքը, ձևավորել սպորտային կյանքով ապրելու մշակույթ:
- ✓ Աջակցել երիտասարդական նախաձեռնություններին, որոնք կակտիվացնեն քաղաքի առօրյա կյանքը, միաժամանակ նրանց ակտիվորեն ներգրավել համայնքի կառավարման գործընթացներին:
- ✓ Շարունակական աջակցություն ցուցաբերել համայնքի կրթամշակութային հիմնարկների անխափան աշխատանքի համար:
- ✓ Հաշվի առնելով Աշտարակի տարածաշրջանի բազմադարյա պատմությունը, պատմամշակութային կոթողները, բացառիկ աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները՝ հնարավոր միջոցներ ձեռնարկել համայնքը զբոսաշրջության կենտրոն դարձնելու համար: Աշխատանքներ կատարել Աշտարակ համայնքում էկոտուրիզմը զարգացնելու համար:
- ✓ Հաճախ կազմակերպել համերգներ, թատերական ներկայացումներ, զարգացնել ժողովրդական արհեստներն ու արվեստները:


Աշտարակցիները իրենց աշխատանքով ապահովել են իրենց բարձր կենսամակարդակը, նրանք ապրում, սովորում և աշխատում են իրենց սիրելի համայնքում:

1.1 Ժողովրդագրություն


Բնակչության թվաքանակը 2022թ. տարեսկզբի դրությամբ կազմում է՝ 75750 մարդ, այդ թվում՝ (37118 տղամարդ, 38632 կին, 14393 երեխա): Ազգաբնակչության 97,3%-ը հայ են:

Այդ թվում՝ խոցելի խմբեր՝ աղքատ 3863 հոգի, 5,1%, ծայրահեղ աղքատ 227 հոգի, 0,3%: Բնակչության մասնաբաժինը ըստ համայնքի բնակավայրերի՝ քաղաքային 28%, գյուղական 72%: Թվով շուրջ՝ 18938 տնտեսություններ:


Գծապատկեր 1. Համայնքի մշտական բնակչության սեռատարիքային կազմը՝



Գծապատկեր 2. Համայնքի մշտական բնակչության թիվը՝



Գծապատկեր 3. Բնակչության մասնաբաժինը ըստ համայնքի բնակավայրերի՝ քաղաքային և գյուղական



Աղյուսակ1. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները՝

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	75750
1.1	Տղամարդիկ	37118
1.2	Կանայք	38632
1.3	0-6 տարեկան այդ թվում՝	14393
1.4	-0-3տարեկան	6908
1.5	-3-6 տարեկան	7484

1.6	7-17 տարեկան	18938
1.7	18-63 տարեկան	34088
1.8	63-ից բարձր տարեկան	8333
2	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	445
2.1	Տարիքային և աշխատանքային	8333
3	Փախստականներ	40
4	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	210
5	Երկողմանի ծնողազուրկ երեխաներ	7
6	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	5
7	Արցախյան պատերազմի մասնակիցներ	384
8	Հաշմանդամներ, այդ թվում	118
8.1	մանկուց հաշմանդամներ	27
9	Աշխատունակներ	91
10	Զբաղվածներ	62
11	Գործազուրկներ, այդ թվում՝	56
11.1	Գրանցված	24
12	Առկա տնային տնտեսությունների թիվը	18938
13	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	966
13.1	Նպաստառու ընտանիքների թիվը	941
14	Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը	25
15	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	115
15.1	Անօթևան ընտանիքներ	-
16	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	155
17	Արտագնա աշխատանքի մեկնող տնային տնտեսությունների թիվը	1704
18	Արտագնա /սեզոնային/աշխատանքի մեկնողների թիվը	2557

II. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը վերջին տարիներին փոքր ինչ բարելավվել է: Բարձրացել է հարկերի հավաքագրման ցուցանիշը, և համայնքային բյուջեն կատարվում է շուրջ՝ 100 տոկոսով: Սակայն վերջինս հնարավորություն է տալիս միայն մասնակի լուծել համայնքի առջև ծառայած մի շարք խնդիրներ: Ընտանիքների միջին եկամուտը կազմում է 100-ից 120 հազար դրամ: Բնակչության որոշ մասն աշխատում է մայրաքաղաքի պետական կամ մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում, համայնքում գործող արտադրական ձեռնարկություններում:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ՝ մասնավորապես խնձորի մշակմամբ: Խնձորի այգիները կազմում են համայնքի պտղատու այգիների մոտ 60 տոկոսը: Մշակում են նաև կեռաս, դեղձ և ծիրան նաև հատապտուղ:

24000 հա վարելահողերը հիմնականում չեն մշակվում և նկատվում է վարելահողերի՝ մշակման վերացման ռիսկ /մասնավորապես համայնքում կա մոտ 250 հա նորատունկ այգի/:

Աղյուսակ2. Համայնքի տնտեսության առաջատար ճյուղերը

Ճյուղի անվանումը	Համայնքի մարդկանց/տնտեսությունների ներգրավվածությունը ճյուղի մեջ
Այգեգործություն	50%
Անասնապահություն	15%
Առևտուր	20%
Արտադրություն	5%
Ծառայություններ	10%

Աղյուսակ3. Հողերի բաշխման աղյուսակ

Դասակարգում	Հողատերերի քանակ	Մեկ հողատիրոջ չափաբաժինը /հա/
Խոշոր	95	10 և ավելի
Միջին	3500	1-3
Մանր	11000	0.3-1

Աղյուսակ4. Համայնքում կա մոտ 10800 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 14000 գլուխ մանր եղջերավոր անասուն, խոզեր 7000 գլուխ, թռչուն 80000 հատ:

Դասակարգում	Ֆերմերների քանակ	Գլխաքանակ
Խոշոր	23	30-60+
Միջին	27	10-30
Մանր	2400	1-3

Աղյուսակ5. Խոշոր տնտեսություններ

Գործունեության տեսակ	Քանակ
Խոշոր անասնատերեր	13
Խոշոր հողատերեր	95

2.1 Համայնքում գործող կազմակերպություններ

Ձեռնարկություններ

Աշտարակ համայնքի վարչական տարածքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների միջոցով: Համայնքում գործում են հանրային սննդի և պարենային խանութներ, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ, հանգստի գոտիներ, բենզա-գազա լցակայաններ: Աշտարակ համայնքում գրանցված են ավելի քան 721 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, այդ թվում՝ շուրջ 17 արտադրական ձեռնարկություններ և 562 առևտրային կազմակերպություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից են՝ գինու գործարան Վան Արդի ՍՊԸ, Արեգի ՍՊԸ, «Վարգա ֆուդ» ՍՊԸ , ՍՈՐՏՍՍՈՐ ՍՊԸ ArLeAM գյուղատնտեսական հողիինգ, «Հայասի գրուպ» ԲԲԸ, «Թամարա Ֆրուտ» ՓԲԸ, «Աշտարակյան գինիներ» ՓԲԸ, «Գրեյդ Վելլի» ՓԲԸ, «Աշտարակի պոլիգրաֆիական գործարան» ԲԲԸ, «Աշտարակ-ձու» ՓԲԸ, «Աշտարակ-կաթ» ԲԲԸ, «Գոլդեն գրեյպ Արմաս» ՍՊԸ և «Ոսկեվազի Գինու Գործարան» ՍՊԸ: Նրանք բոլորը հաշվառված են համայնքում և վճարում են սահմանված կարգով տեղական տուրք համայնքային բյուջե, գործունեություն իրականացնելու համար:

Աշտարակում իրենց մասնաճյուղերն ունեն Հայաստանի բջջային կապի բոլոր օպերատորները, ինչպես նաև Ռոստելկոմի սպասարկման գրասենյակը: Այս գրասենյակներում աշխատողների ընդհանուր թիվը հասնում է մինչև 30 աշխատող:

Առևտուր

Համայնքն ունի զարգացած առևտրային ցանց ավելի քան 175 պարենային (ներառյալ 9 սուպերմարկետները), և շուրջ 134 ոչ պարենային խանութներ, ներառյալ՝ կոշիկի, հագուստի, վարագույրների կտորեղենի, բիժուտերիայի, ավտոպահեստամասերի և այլ մասնագիտացված մանրածախ խանութներ, ինչպես նաև ոսկերչական չորս սրահներ որոնցում, փորձագիտական գնահատմամբ աշխատում է 1200-ից 1300 մարդ:

Աշտարակում գործում է մեկ գյուղատնտեսական շուկա 15 տեղ, հագուստի մեկ տոնավաճառ – 20 տեղ:

Քանկեր և ֆինանսական ծառայություններ

Քաղաքում գործում է ֆինանսաբանկային ոլորտի 12 կազմակերպություն որոնցից քանկեր - 8, վարկային կազմակերպություն – 4:

Աշտարակում գործում է յոթ ապահովագրական գրասենյակ, որոնք ներկայացնում են Հայաստանի գլխավոր ապահովագրական ընկերությունները՝ Ռեսո (RESO), Ինգո Արմենիա, (IngoArmenia), Ռոսգոսստրախ (Rosgosstrakh), Սիլ խնշուրանս (SIL Insurance), Նաիրի ինշուրանս (Nairy Insuranse), Արմենիա ինշուրանս (Armenia Insuranse):

Աշխատողների թիվը յուրաքանչյուր կազմակերպությունում տատանվում է 5-13 միջև: Ուստի այս ոլորտում առկա աշխատանքային տեղերի թիվը կարող է հասնել 250-ի:

Աղյուսակ6. Ներկայացվում է համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալներ՝

Անվանումը	Ընդամենը	որից՝ գործող	Չբաղվածների թվաքանակը /մարդ/
Խոշոր արտադրամասեր/ սառնարանային տնտեսություններ	17	17	445
ավտոմեքենաների տեխսպասարկման կայան	22	22	25
Մանրածախ առևտրի օբյեկտների քանակը այդ թվում՝	188	188	749
Խանութներ/ հանրախանութներ	132	132	528
Կրպակներ	21	21	21
Բենզա-գազա լցակայաններ	20	20	95
Հանրային սննդի սպասարկման օբյեկտներ	15	15	105
Ընդամենը	227	227	1219

Համայնքի տարածքում գործում են 227 կազմակերպություններ, այդ թվում՝ 17 հոշոր արտադրամասեր/ սառնարանային տնտեսություններ, 188 մանրածախ առևտրի օբյեկտներ, 22 ավտոմեքենաների տեխսպասարկման կայան, 21 Կրպակներ, որոնցում զբաղվածների թիվը կազմում է շուրջ՝ 1219 հոգի:

Գյուղմթերքի վերամշակում

Հնագույն ժամանակներից Աշտարակի շրջանը, շնորհիվ յուրահատուկ աշխարհագրական դիրքի և բնակլիմայական պայմանների, ունեցել է գյուղմթերքի վերամշակման և գինեգործության հարուստ փորձ և ավանդույթներ: Այժմ Հայաստանյան շուկայում շատ հայտնի են, և ավանդական պահանջարկ ունեն ծիրանի, սալորի և խնձորի աշտարակյան չրեղենը: Աշտարակյան ընկույզի սուջուլին ու ալանին համարվում են հայկական ամանորյա սեղանի պարտադիր բաղադրիչներ: Իսկ աշտարակյան ընկույզը տեղ է գտել նաև ժողովրդական բանահյուսության մեջ: Գրեթե ամեն ընտանիք իրենց համար չիր, մուրաբաներ և ընկույզի քաղցր սուջուլի և ալանի են պատրաստում: Արտադրածի ավելցուկը իրացվում է շուկայում: Նշված թվի մոտ 20% -ի համար այս չրեղենի արտադրությունն ու վաճառքը հանդիսանում է լրացուցիչ սեզոնային եկամուտի աղբյուր:

Հարցման ընթացքում բացահայտվել է Աշտարակ համայնքում գործող՝ Աշտարակի տարածքում 2017թ. գործում է օրգանական սննդով զբաղվող “Ագրոլոգ” ընկերությունը: Գյուղմթերքի մթերման և վերամշակման սեզոնին ընկերությունում աշխատում է մինչև քսան մարդ: Նախորդ տարվա շրջանառությունը կազմել է շուրջ՝ 40 մլն. դրամ, այս տարի նշված ցուցանիշը նախատեսվում է հասցնել հիսուն 60մլն. դրամի:

Համայնքի տարածքում կան տնկարաններ:

«Թամարա Ֆրութ» ՍՊԸ և «ՍՈՐՏՍՍՈՐ» ՍՊԸ ArLeAM գյուղատնտեսական հոլդինգ, 5 000 տ և 7 000 տ տարողությամբ սառնարանային տնտեսություններ:

Մրգերի աճեցում---> հյութեր, պահածոներ,մուրաբաներ---> տարայավորում---> վաճառք

«Թամարա Ֆրութ» ՍՊԸ և «ՍՈՐՏՍՍՈՐ» ՍՊԸ ArLeAM գյուղատնտեսական հոլդինգ:

Բանջարեղենի աճեցում---> խորը սառեցում--->փաթեթավորում--->վաճառք

«Թամարա Ֆրութ» ՍՊԸ և «ՍՈՐՏՍՍՈՐ» ՍՊԸ ArLeAM գյուղատնտեսական հոլդինգ:

Բանջարեղենի աճեցում---> թթուների տեսականի---> տարայավորում---> վաճառք

«Թամարա Ֆրութ» ՍՊԸ, «Վարգա ֆուդ» ՍՊԸ և «ՍՈՐՏՍՍՈՐ» ՍՊԸ ArLeAM գյուղատնտեսական հոլդինգ

Համարյա բոլոր տնտեսությունները պատրաստում են սուջուլի, սակայն վաճառելու նպատակով այս գործունեությամբ զբաղվում են մոտ 15 տնտեսություններ:

2.2 Կրթական հաստատություններ

Համայնքի տարածքում գործում են կրթական հետևյալ օջախները՝

Աշտարակ համայնքում գործում է 7 դպրոց՝ 6 միջնակարգ, և մեկ ավագ՝ Ն.Սիսակյանի անվան No 5 դպրոցը: Համայնքն ունի նաև մեկ երշատշտական և մեկ գեղարվեստի, մարզային պատկանելիության մեկ մարզադպրոց, ինչպես նաև Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցը: Աշտարակում գործում է չորս համայնքային մանկապարտեզ, որոնցում աշխատում է 127 աշխատող, և դաստիարակվում է 610 երեխա, և մեկ մասնավոր մանկապարտեզ:

Աշտարակն ունի մեկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն՝ ՀՀ ԿԳՆ «Աշտարակի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ, որը մասնագետներ է պատրաստում հետևյալ երեք ուղղություններով՝ հասարակական սնունդ, զարդակիրառական արվեստ և կարի արտադրության տեխնոլոգիա: Ուսումնարանն ունի 116 սովորող և 31 աշխատող:

Գործում է անգլերեն լեզվի դասընթացներ իրականացնող մասնավոր ուսումնական կենտրոն:

Համայնքում չկան բարձրագույն ուսումնական հաստատություններ, կամ դրանց մասնաճյուղեր, ինչը պայմանավորված է մայրաքաղաքին մոտ լինելով:

Գիտություն

Խորհրդային տարիներից Աշտարակում գործում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, և ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտները: Որոնք գործում են որպես ՊՈԱԿ-եր ՀՀ ԳԱԱ համակարգում, և իրականացնում են հետազոտական, գիտական և ուսումնական աշխատանքներ:

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի եվ էլեկտրոնիկայի ինստիտուտ (ՊՈԱԿ): ՌՖԷԻ-ում աշխատում է 150 մարդ, որոնցից 45-ն ունեն գիտությունների դոկտորի կամ պրոֆեսորի աստիճան: Ինստիտուտը զբաղվում է մի շարք գիտական և կիրառական աշխատանքներով ինչպես պետական այնպես էլ միջազգային գրանտների ֆինանսավորմամբ:

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (ՊՈԱԿ):

Այս գիտական հաստատության առաջնային նպատակն է հիմնարար հետազոտություններում, կիրառական մշակումներում և նորարարության մեջ գերազանցության հասնելը՝ միտված հայկական գիտության, տնտեսության ու հասարակության, ինչպես նաև Ինստիտուտի անձնակազմի բարեկեցությանն ու բարգավաճմանը:

Նման գիտական ներուժ ունեցող հաստատությունների առկայությունը համայնքի համար կարող է հիմք հանդիսանալ գիտահեն արտադրություն կազմակերպելու համար: Ինստիտուտի տնօրենի հետ քննարկել ենք համագործակցության հնարավորություններ: Սակայն այս պահին համայնքը չունի պատրաստի առաջարկ այս հաստատության համար:

2.3 Մշակույթ, երիտասարդության հետ փարվող աշխատանքներ

Համայնքի մշակութային և երիտասարդական ակտիվ կյանքն ապահովում են երկու մշակույթի տները: Քաղաքային մշակույթի տունն ունի 450 նստատեղ, իսկ «Արայի» մշակույթի տունը գտնվում է վթարային վիճակում, որտեղ տեղակայված է գրադարանը, Հայրորդաց տուն, 3 թանգարան և երիտասարդական կազմակերպություն

(Երիտասարդական հիմնադրամի Արագածոտնի մասնաճյուղ) և 1 մարզային գրադարան: Քաղաքի ակտիվ մարզական կյանքն ապահովում են քաղաքային մարզադպրոցը, հանրակրթական դպրոցների տարբեր սպորտային խմբակները, տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների տարածքային կազմակերպությունները, սպորտային ակումբը, հիմնարկ-ձեռնարկությունների թիմերը, մարզադաշտի ենթակայության տակ գործող մի շարք խմբակներ, անհատները: Մարզադպրոցի գործունեությունը դադարեցված է շենքի վթարային լինելու պատճառով: Մարզադպրոցի անբավարար և վթարային շենքային պայմաններից ելնելով 2009-ին սկսվել է նոր մարզական համալիրի կառուցումը, որը էլ ավելի կաշխուժացնի քաղաքի մարզական կյանքը:

2.4 Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Աշտարակ քաղաքի առողջապահական համակարգում գործում են 1 բժշկական կենտրոն, 1 բժշկական ամբուլատոր պոլիկլինիկա, սանէպիդկայան, ատամնաբուժարան, շտապ բուժօգնության կայան և տասից ավելի դեղատներ: Առողջապահական համակարգում բուժաշխատողների միջին թվաքանակը՝ 272:

Հիվանդանոցում աշխատող բժիշկների թիվը 87 է: Բժշկական կենտրոնն ունի յոթ բաժանմունք, պոլիկլինիկական հինգ: Տարեկան սպասարկվում է մոտ 1851 հիվանդ: Ցածր է բուժաշխատողների աշխատավարձը: Այս բնագավառին հատկացվող գումարները բավարարում են միայն աշխատավարձի և կոմունալ ծախսերի վճարման համար:

2.5 Զբոսաշրջություն

Աշտարակ համայնքում զբոսաշրջության զարգացումն ունի մեծ հեռանկար, քանի որ համայնքում առկա է զբոսաշրջության հիմնական ճյուղերի՝ համակարգված և փոխլրացնող զարգացման համար անհրաժեշտ և մեծածավալ ներուժ: Համայնքը կարող է հետաքրքիր լինել ինչպես ներգնա, այնպես էլ՝ ներքին զբոսաշրջության զարգացման համար:

Զբոսաշրջության զարգացումը հանդիսանում է Աշտարակ համայնքի 2022-2026 թվականների զարգացման ռազմավարության գերակա խնդիրներից մեկը, ուստի զբոսաշրջության զարգացման ծրագրի իրականացման համատեքստում ավելի արդիական է դառնում համայնքում զբոսաշրջության

զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը:

Բնական տարածքների տուրիստական պոտենցիալի զարգացման համար լայն հնարավորություն է տալիս համայնքի տարածքով անցնող Քասաղ գետի առկայությունը՝ իր շրջակա միջավայրով, կիրճերով, բնության գեղատեսիլ վայրերով:

Զարգացման մեծ հնարավորություն ունի ճանաչողական և ընտանեկան տուրիզմը, համայնքում առկա են պատմամշակութային հուշարձաններ, հանրապետական և տեղական նշանակության:

Արդյունավետ գործելու դեպքում համայնքի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կհասնի ցանկալի արդյունքի:

Զբոսաշրջության զարգացման ապահովման համար ձեռնարկվելիք քայլերը.

- պատմա-ճարտարապետական տուրիզմ,
- ձմեռային տուրիզմ
- արկածային տուրիզմ, գյուղական տուրիզմ և էկոտուրիզմ:

Նշված զբոսաշրջային ուղղությունների զարգացման արդյունքում համայնք այցելող զբոսաշրջիկների թիվը կավելանա շուրջ 20-30%:

Զբոսաշրջության զարգացման համար Աշտարակ համայնքն ունի հետևյալ առավելությունները.

- 1) Հարմար աշխարհագրական դիրք և տրանզիտային հնարավորություններ,
- 2) Հարմար տրանսպորտային ենթակառուցվածքներ,
- 3) Հարուստ պատմա – մշակութային ժառանգություն,
- 4) Էկոլոգիապես մաքուր և գեղեցիկ բնություն,
- 5) Շուրջտարյա զբոսաշրջության կազմակերպման մեծ պոտենցիալ,
- 6) Յուրահատուկ խոհանոց:

Զբոսաշրջության ոլորտի թույլ կողմերից է՝ տուրիստական ենթակառուցվածքների, ոչ բավարար վիճակ, այդ թվում՝ հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների, ոչ բավարար մակարդակ:

Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ, բակային տարածքներ

Քաղաքն ունի մեկ ընդարձակ զբոսայգի, երեք բացօթյա խաղահրապարակ, մեկ մարզադաշտ և Քասախի կիրճի բնական հանգիստի գոտին, ուր գործում են հանրապետությունում հայտնի «Աշտարակի Ձոր», «Աշտարակի լիճ» ժամանցի վայրերը, «Արևիկ» և այլ հանգստի գոտիներ:

Կապված 90-ական թվականների էներգետիկ ճգնաժամի հետ, քաղաքի կանաչ տարածքները մեծ վնաս կրեցին մասսայական ծառահատումներից: Անմխիթար վիճակում են քաղաքի զբոսայգիներն ու կանաչ գոտիները:

Քաղաքում գործում են 4 մասնավոր տուրիստական կացարաններ՝ 30 մահճակալ տարողությամբ: Սակայն այս քանակությունը բավարար չէ լուրջ ներգնա՝ գիշերակաց ներառող տուրիստական փաթեթներ առաջարկելու համար:

Ներգնա զբոսաշրջության ոլորտի մեր հաջորդ կիզակետը մառանային գինեգործների առաջարկի վրա կազմակերպվող գինեգործական տուրերի մշակումն է:

Աշտարակի և հարակից բնակավայրերի՝ գրեթե բոլոր հին սեփական տներում կան մառաններ, որոնք այս օրերին ապրում են իրենց վերածնունդը: ՄԱԿԶԾ (UNDP IRTD) ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացման ծրագրի հետ համագործակցությամբ ձևավորվում է մառանային գինեգործների նոր խումբ որոնց շնորհիվ Աշտարակում և մարզում զարգանում է գինեգործական տուրիզմը: Ուստի քաղաքի գինեգործության հարուստ փորձն ու ավանդույթները օգտագործվում են համայնքի տնտեսական զարգացման համար:

III. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԵՐ

3.1 Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմ

Տեղական ինքնակառավարման համակարգը արդեն թևակոխել է գործնական ծրագրերի իրականացման փուլ: Համայնքապետի ղեկավարությամբ օրեցօր մեծ տեղ է հատկացվում նոր հարաբերությունները կյանքի կոչելու խնդիրներին ու դրանց իրականացնանը:

Ավելի մոտ գտնվելով բնակչությանը և քաջատեղյակ լինելով համայնքի առանձնահատկություններին, հանդիսանալով իշխանության առանձին օղակ, այսօր ինքնուրույն ձևով և անձնական պատասխանատվությամբ են լուծվում համայնքի առջև ծառայած խնդիրներն ու հարցերը:

Բնակֆոնդի և հասարակական վայրերի սպասարկում, սանիտարական մաքրում, աղբահանություն, կանաչապատում և լուսավորում, կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների սպասարկում: Ահա այն կարևոր բնագավառների ոչ լրիվ ցանկը, որոնք սպասարկում է տեղական ինքնակառավարման մարմինը:

Համայնքն ունի իր զինանշանը, դրոշը և օրհներգը:

2021թ. դեկտեմբեր ամսին կայացավ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ և ընտրվեց համայնքի ավագանին՝ 27 անդամներով և օրենքի ուժով համայնքի ղեկավար ընտրվեց՝ Թովմաս Շահվերդյանը: Համայնքի ավագանին 2021թ դեկտեմբերի 24-ի թիվ 10-Ա որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Ստորև ներկայացվում է այն՝

2022 թվականի Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 223

Աղյուսակ 7. Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Միավորը	Դրույքաչափը	Գումարը
1. Քաղաքական, հայեցողական և վարչական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավար	1	565000	565000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	458000	458000
3	Համայնքի ղեկավարի տեղակալներ	2	458000	916000
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	2	310000	620000
5	Համայնքի ղեկավարի օգնական	3	290000	870000
6	Մամուլի քարտուղար	1	330000	330000
7	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական	1	200000	200000
8	Համայնքի ղեկավարի տեղակալի օգնական	1	150000	150000
Վարչական ղեկավարներ				
1	մինչև 500 բնակչություն ունեցող վարչական տարածք	4	250000	1000000
2	501-1500 բնակչություն ունեցող վարչական տարածք	11	330000	3630000
3	1501-3000 բնակչություն ունեցող վարչական տարածք	6	350000	2100000
4	3001-ից ավել բնակչություն ունեցող վարչական տարածք	6	380000	2280000
Ընդամենը		39		13 119 000
2. Համայնքային ծառայություն				
1	Աշխատակազմի քարտուղար	1	458000	458000
2	Գլխավոր մասնագետ-անձնակազմի կառավարման գծով	1	200000	200000

3	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	2	200000	400000
4	Աշխատակազմի առաջատար մասնագետ	4	180000	720000
Ընդամենը		8		1 778 000
Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Բաժնի պետի տեղակալ	1	300000	300000
3	Գլխավոր մասնագետ	4	200000	800000
4	Առաջատար մասնագետ	4	180000	720000
Ընդամենը		10		2 220 000
Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Բաժնի պետի տեղակալ	1	300000	300000
3	Գլխավոր մասնագետ	7	200000	1400000
4	Առաջատար մասնագետ	9	180000	1620000
Ընդամենը		18		3 720 000
<p>Սաղմոսավան</p>	<p>Սաղմոսավան բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 45% ասֆալտապատ են, 55% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 75% և ջրամատակարարման տևողությունը 12 ժամ:</p> <p>Գազաֆիկացված է (բացառություն են կազմում մի քանի հատվածներ) գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է 85%:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, ապահովված է փողոցային լուսավորությամբ շուրջ՝ 45%-ով, որից էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 30%:</p>

	<p>Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի վերանորոգման կարիք: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 80%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 65%:</p>
<p>Սասունիկ</p>	<p>Սասունիկ բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 65% ասֆալտապատ են, 35% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 95% և ջրամատակարարման տևողությունը 24 ժամ:</p> <p>Գազաֆիկացված է (բացառություն են կազմում մի քանի կարճ հատվածներ) գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է 90%:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 55%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 40%:</p> <p>Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 85%:</p>
<p>Կարին</p>	<p>Կարին բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 50% ասֆալտապատ են, 50% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 90% և ջրամատակարարման տևողությունը 12 ժամ:</p> <p>Գազաֆիկացված չէ:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 45%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 35%:</p> <p>Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 85%:</p>
<p>Վերին Սասունիկ</p>	<p>Վերին Սասունիկ բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 50% ասֆալտապատ են, 50% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 90% և ջրամատակարարման տևողությունը 12 ժամ:</p> <p>Գազաֆիկացված չէ:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 45%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 35%:</p> <p>Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք:</p>

	<p>Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 65%:</p>
<p>Տեղեր</p>	<p>Տեղեր բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 50% ասֆալտապատ են, 50% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 90% և ջրամատակարարման տևողությունը 12 ժամ:</p> <p>Գազաֆիկացված չէ:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 45%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 35%: Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 65%:</p>
<p>Ուշի</p>	<p>Ուշի բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 45% ասֆալտապատ են, 55% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 95% և ջրամատակարարման տևողությունը 24 ժամ:</p> <p>Գազաֆիկացված է (բացառություն են կազմում մի քանի հատվածներ) գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է 85%:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 45%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 40%: Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 85%:</p>
<p>Ուջան</p>	<p>Ուջան բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 55% ասֆալտապատ են, 45% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 95% և ջրամատակարարման տևողությունը 24 ժամ:</p> <p>Գազաֆիկացված է (բացառություն են կազմում մի քանի հատվածներ) գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է 90%:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 55%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 40%: Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք:</p>

	<p>Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 85%:</p>
<p>Փարպի</p>	<p>Փարպի բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 75% ասֆալտապատ են, 25% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 95% և ջրամատակարարման տևողությունը 24 ժամ:</p> <p>Գազաֆիկացված է (բացառություն են կազմում մի քանի հատվածներ) գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է 90%:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 75%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 70%: Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 85%:</p>
<p>Օհանավան</p>	<p>Օհանավան բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 75% ասֆալտապատ են, 25% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 95% և ջրամատակարարման տևողությունը 24 ժամ:</p> <p>Գազաֆիկացված է (բացառություն են կազմում մի քանի հատվածներ) գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է 90%:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 75%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 70%: Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 85%:</p>
<p>Օշական</p>	<p>Օշական բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 75% ասֆալտապատ են, 25% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 95% և ջրամատակարարման տևողությունը 24 ժամ:</p> <p>Գազաֆիկացված է (բացառություն են կազմում մի քանի հատվածներ) գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է 90%:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 75%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 70%:</p>

	<p>Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 85%:</p>
<p>Օրգով</p>	<p>Օրգով բնակավայրի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարության շուրջ 45% ասֆալտապատ են, 55% ճանապարհները գրունտային են:</p> <p>Ապահովված է խմելու ջրով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը կազմում է՝ 95% և ջրամատակարարման տևողությունը 24 ժամ:</p> <p>Գազաֆիկացված չէ:</p> <p>Էլեկտրամատակարարումը իրականացվում է ՀԷՑ-ի կողմից, փողոցների մոտավորապես 45%-ում առկա է փողոցային լուսավորության համակարգ, ընդհանուր փողոցների մեջ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է կազմում է՝ 35%:</p> <p>Առկա է ոռոգման համակարգ, սակայն ոռոգման ցանցի հետ կապված մի քանի հատվածներում կան խնդիրներ, համակարգը ունի մասամբ վերանորոգման կարիք: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը կազմում է՝ 90%, գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է՝ 65%:</p>

4.2 Բնակելի և ոչ բնակելի փարածքների սպասարկում

Համայնքում բազմաբնակարանային շենքերի բնակարանների քանակությունը էականորեն զիջում է հարակից մարզերում առկա բազմաբնակարան շենքերի բնակարանային ֆոնդին: Համայնքի բնակարանային ֆոնդն ընդգրկում է 639873 քառակուսի մետր մակերես: Աշտարակ քաղաքում բնակարանային ֆոնդի սպասարկումը իրականացվում է քաղաքապետարանի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից: Քաղաքում կա վթարային 3 շենք, 2-ը 5, 1-ը 4 հարկանի: Խորհրդային տարիներին բնակելի ֆոնդի կառուցումը, շահագործումը և պահպանումը իրականացվում էր պետական միջոցների հաշվին: Ներկայումս պետական միջոցների սղության պայմաններում բնակելի շինարարության ֆինանսավորման բեռը տեղափոխվում է անհատների միջոցների վրա: 2023թ-ից իրականացվելու է սոցիալական բնակարաշինության ծրագիրը:

Աղյուսակ11.Բազմաբնակարան շենքեր

Ը/Ը	Անվանումը	ընդամենը	Այդ թվում ըստ արտաքին պատեր նյութերի		Տանիքի ձևը թեք
			քարից	պանելային	
1	Շենքերի քանակը, ընդամենը	202	157	45	202
1.1	Այդ թվում մեկ հարկանի				

1.2	Երկու հարկանի	135	96	39	135
1.3	Երեք հարկանի	9	9		9
1.4	Չորս հարկանի	18	17	1	15
1.5	Հինգ հարկանի	39	35	4	39
1.6	Ինը հարկանի	1		1	1

4.3 Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը 4233.80 հա, այդ թվում՝

- բնակարանային ֆոնդ – 1186.71 հա
- արտադրական նշանակության հողեր – 121.39 հա
- գյուղատնտեսական նշանակության հողեր- 2720.40 հա
- հանգստի գոտիներ- 3.02 հա
- ջրային ֆոնդեր – 17,05 հա
- այլ – 121,11 հա
- Բնակավայրի տարածքը -1186,71հա
- Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը – 2980
- Մեկ հողաբաժնի չափը - Աշտարակ տեղամասում՝0.3 հա, «Արայի»

տեղամասում՝0,65 հա

- Համայնքի սեփականություն համարվող հողերը – 1317.28 հա
- Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները – 1437,6 հա

Հավելված 3-ում բերված են 01.07.2016թ. դրությամբ համայնքի վարչական տարածքի հողերի վերաբերյալ տվյալներն՝ ըստ հողատեսքերի:

Հանրապետությունում 1991 թվականին իրականացված հողի սեփականաշնորհմանը մասնակցել են համայնքի բոլոր տնային տնտեսությունները: Համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 600քմ-5000քմ, որից 600քմ տնամերձ, 4400քմ գյուղատնտեսական նշանակության:

4.4 Գյուղատնտեսություն

Համայնքի համախառն արտադրանքի մեջ մեծ տեսակարար կշիռ ունի գյուղատնտեսությունը: Հողային ստրուկտուրան խիստ փոփոխական է համեմատած այլ շրջանների հետ: Մի փոքր հողակտորում կարող է լինել և սևահող, և գորշ շագանակագույն հող և անօգտագործելի տարածք:

Դարերի ընթացքում մշակվել է խաղող, որից ստացված գինիները աշխարհում մեծ համբավ են վայելում: Խերեսացված գինիների հիմնական շտեմարանը Աշտարակի շրջան է:

Գերակշիռ մասն է կազմում նաև պտղաբուծությունը, որը վերջին 20 տարիների ընթացքում մեծ առաջխաղացում է ապրել: Հիմնականում մշակվել է ինտենսիվ պտղաբուծական տնկարկներ

/խնձորենի/, որը հարմարվելով տեղական բնակլիմայական պայմաններին տալիս է բարձր և որակով բերք:

Գյուղացիական տնտեսությունները զբաղվում են բանջարաբուստանային կուլտուրաների մշակմամբ, որը մասամբ է բավարարում քաղաքի առօրյա պահանջներին: Վերջին մի քանի տարիների ընթացքում բնակչությունը զբաղվում է նաև հացահատիկի, անասնապահական մթերքների արտադրությամբ, որը նույնպես չի բավարարում քաղաքի պահանջներին:

Գյուղատնտեսական զարգացմանը խոչընդոտում են գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունները, նախ և առաջ գյուղ. մթերքների ցածր գները, ոռոգման հետ կապված դժվարությունները, գյուղատնտեսության կարիքներին արձագանքելու անհրաժեշտ օղակների թերզարգացած վիճակը կամ իսպառ բացակայությունը /ագրոսպասարկման, ֆինանսավարկային, ապահովագրական/ և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքի բյուջեի զգալի մասը ձևավորվում է հողի հարկից, պոտենցիալ հարկատուների տնտեսական վիճակը ձեռք է բերում կարևորագույն նշանակություն: Իհարկե չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ այդ հարցը առնչվում է նաև զբաղվածության, պարենային և այլ կարևորագույն խնդիրների հետ:

Արոտավայրերի ջրարբիացվածության մակարդակն անբավարար վիճակում է:

Համայնքում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Համայնքի գյուղատնտեսության ոլորտի հիմնական ուղղություններն են բուսաբուծությունը և անասնապահությունը

Աշտարակ համայնքը ճանաչված է իր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ: Համայնքի ծիրանի, կեռասի և խնձորի համբավը տարածված է ոչ միայն Հայաստանում այլ նաև նրա սահմաններից դուրս: Հողերի սեփականաշնորհումից տարիներ անց բնակիչները և գյուղատնտեսական կազմակերպությունները սկսեցին հիմնել նոր այգիներ համայնքում:

Համայնքի բնակիչների շատ քիչ մասն է զբաղվում անասնապահությամբ: Համայնքում հաշվառված են կենդանիների հետևյալ գլխաքանակները՝

- Կովեր – 207 գլուխ
- Երիննջներ և արտադրող ցուլեր -398 գլուխ
- Խոզեր-68 գլուխ
- Թռչուններ-885 թև
- Մեղվաընտանիքներ-160 հատ

Արոտավայրերի և խոտհարքերի բացակայության պատճառով անասնակերը ձեռք են բերում այլ տարածաշրջանից կամ սեփականաշնորհված հողամասերը օգտագործում են այդ նպատակով:

4.5 Բնություն և շրջակա միջավայրի պահպանություն

Համայնքում շրջակա միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի աղբահանության /նաև սանիտարական մաքրման կազմակերպումը: Այն իրականացվում է համայնքապետարանի «Աշտարակ համայնքի կոմունալ ծառայություն» տնօրինությամբ: Աղբահանությունը իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան, համայնքի ավագանու կողմից հաստատված կարգի և սխեմայի, համաձայն սահմանված ժամանակացույցի հիման վրա: Համայնքը աղբավայր չունի և պայմանագրով օգտվում է այլ կազմակերպություններին պատկանող աղբավայրից ըստ պայմանագրի:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Համայնքի համար աղբավայրի ստեղծում
- Ավելացնել համայնքի կանաչապատ տարածքները
- Բարեկարգել փողոցները, բակային տարածքները
- Տեղադրել ստանդարտներին համապատասխան աղբամաններ
- Իրականացնել ծառատունկ համայնքի փողոցներում և գերեզմանատներում
- Ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝

միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, պարբերաբար անցկացվող սեմինարների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

4.6 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Աշտարակ համայնքի վարչական տարածքը կազմում է 72297.32 հա

Համայնքի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը 197 կմ է՝ կամ 886500 քմ ընդհանուր մակերեսով:

Դրանցից շուրջ՝ 55% փողոցները և ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատ են, 487575 քմ ընդհանուր մակերեսով, իսկ շուրջ՝ 45% կամ 398925 քմ ընդհանուր մակերեսով փողոցները և ներհամայնքային ճանապարհները գրունտային են:

Համայնքի բյուջեի միջոցներով ամեն տարի կապիտալ նորոգման և ճաքալցման են ենթարկվում մի շարք փողոցներ և ներհամայնքային ճանապարհներ, ինչը երկարացնում է փողոցների շահագործումը՝ ապահովելով ավտոմեքենաների և մարդկանց բնականոն և անվտանգ տեղաշարժը, սակայն այն կատարվում է ոչ մեծ ծավալներով:

Համայնքի 5-ամյա զարգացման ծրագրում և 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանում ճանապարհաշինությունը՝ ասֆալտապատում և կապիտալ նորոգում բաղադրիչներով, ունի իր հստակ տեղը:

Հաշվի առնելով համայնքի զարգացման ուղղությունները և մի շարք առաջնահերթություններ՝ այն է՝ ճանապարհի անվտանգության ապահովում, զբոսաշրջություն, փոքր և միջին բիզնեսի զարգացում, բնակչության սոցիալական պայմանների բարելավում, բարենպաստ միջավայրի ստեղծում: Համայնքը պատրաստ է մասնակցություն ունենալ խնդրի լուծմանը՝ ակնկալելով «Արագածոտնի մարզի 2022-2026 թվականների բյուջետային ֆինանսավորման ծրագրերից, նպատակային հատկացումներ, սուբվենցիաներ:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ12. Համայնքի զարգացման ՈՒԹՀՎՎ վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1.Համայնքի աշխարհագրական դիրքը</p> <p>2.Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները</p> <p>3.Հին բնակավայրերի գրավիչ ճարտարապետական տեսքը</p> <p>4.Տուրիզմի զարգացման մեծ հնարավորությունները</p> <p>5.Փոքր և միջին բիզնեսում բնակչության ներգրավվածությունը</p> <p>6.Հասանելի է բջջային կապի 3 օպերատորները</p> <p>✓ Այգեգործության համար բարենպաստ բնակլիմայական պայմանները նպաստում են որակյալ բերքի ստացմանը:</p> <p>✓ Խնձորի աճեցման, երկարատև պահպանման վերաբերյալ գիտելիքները և ավանդույթները:</p> <p>✓ Համեմատաբար մեծ տարողունակությամբ սառնարանների առկայությունը համայնքում /ընդհանուր առնվազն 8000 տոննա/ հնարավորություն է ստեղծում պահպանել բերքը և վաճառել ավելի բարձր գնով:</p> <p>✓ Համայնքի աշխարհագրական դիրքը / գտնվում է Երևանից 18 կմ, Աշտարակից 6-7 կմ հեռավորության և Երևան-Վանաձոր մայրուղու վրա/ հեշտացնում է կապը իրացման շուկաների հետ:</p> <p>✓ 14-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցին / 1338 թ-ին եղել է զանգակատուն, ապա 1691թ. հարևանությամբ կառուցվել է մեծ եկեղեցին/, որը ոչ մեծ տուրիստական խմբեր է բերում համայնք:</p>	<p>1.Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը</p> <p>2.Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում</p> <p>3.Կոմունիկացիոն ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը, մասնավորապես խմելու ջրացանցի մասնակի, համայնքի ոռոգման համակարգի և կոյուղացանցի վատթար վիճակը</p> <p>4.Բնակարանի կարիք ունեցող երտասարդ ընտանիքների մեծ թիվը</p> <p>5.Փողոցների ոչ բարվոք վիճակը</p> <p>6.Բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը</p> <p>7.Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայություն</p> <p>8.Գյուղատնտեսական արտադրանքի ստացման բարձր ինքնարժեք և իրացման դժվարություններ</p> <p>9.Կենտրոնացված կոյուղու բացակայություն</p>
Հնարավորություններ	Վտանգներ
<p>1.Աշխատուժի առկայություն</p> <p>2.Տուրիզմի զարգացման համար գեղատեսիլ տարածքի առկայություն, պատմական և մշակութային</p>	<p>1.Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, սողանքների առաջացում)</p>

<p>վայրերի առկայություն, շահագրգիռ ձեռներեցների նախաձեռնություններ:</p> <p>3.Գյուղմթերքների վերամշակման և այգեգործական մրգերի փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը</p> <p>4.Կոոպերատիվների ստեղծում</p> <p>5.Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը</p>	<p>2.Գործազրկության մակարդակի աճը</p> <p>3.Բնակֆոնդի վիճակի վատթարացումը</p> <p>4.Բնակչության աճի ցածր տեմպ</p> <p>5.Արտագաղթը</p>
---	--

Համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է գյուղի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, համայնքի տարածքում կարող է բնակվել առավելագույնը մոտ 90.0 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Աշտարակ համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում սպասարկման, հումքային, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը:

5.1 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Համայնքի զարգացման տեսլական

Աշտարակ համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը, համայնքը դարձնել առողջարանային գոտի, մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝


- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 12. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2022-2026թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2022	2023	2024	2025	2026
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	6.2%	5,4%	4,2%	3,1%	2.5%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով	2.4 %	6.3 %	7.3 %	1.6 %	1.5 %
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0.32	0.51	0.73	0.67	0.54

Գծապատկեր 3. ՀՀԾ նպատակների, և գործողությունների սահմանման, անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման հերթականությունը



Աշտարակ համայնքում գալիք տարիներին՝ ՀԶԾ իրականացման արդյունքում նախատեսվում է

1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում, որի արդյունքում համայնքում կգործեն ձեռնարկությունների մասնաճյուղեր՝ մասնավորապես գյուղ մթերքների վերամշակման, չրերի արտադրության, խմելու ջրի և գյուղմթերքների պահածոյացման փոքր և միջին ձեռնարկություններ:

2. Իրականացնել ծրագրեր ուղղված զբոսաշրջության զարգացմանը, որի ընթացքում նախատեսվում է համայնքում կառուցել հանգստյան գոտիներ, տնային տնտեսություններին կից հյուրանոցային տիպի շինությունների կառուցում, նոր առևտրի կետերի վերաբացում:
3. Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվում է զարկ տալ կոոպերատիվային շարժմանը, մեքենատրակտորային կենտրոնացված կայանի ստեղծում, ժամանակակից բարձր արտադրողական տեխնիկայի ձեռք բերում, վարի տրակտոր և այլ գյուղտեխնիկաներ և գործիքներ: Նախատեսվում է նաև վերականգնել ոռոգման ջրագծեր, որոնց արդյունքում ոռոգման ջրով անխափան կապահովվի 50-ից 60հա հողատարածք: Նախատեսվում է նաև արոտների ճանապարհներ կառուցում, արոտատեղերում մակատեղերի, կացարանների և ծածկոցների կառուցում:
4. Համայնքի զարգացման ընթացքը իրատեսական և նպատակային լինելու համար անհրաժեշտ ենք համարում բնակչության բնական և արհեստական աճը: Գործարար միջավայրի բարելավումը, աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսության ինտենսիվացումը մեծ խթան կլինեն համայնքում ծնելիությանը և բազմազավակությանը, ինչպես նաև բնակչության ներհոսքին: Բազմազավակությանը և ծնելիությանը խթանելու համար նախատեսվում է նաև ֆինանսական օգնության իրականացում, նորաստեղծ ընտանիքներին անհատույց տնամերձ հողամասերի տամադրում:
5. Նախատեսվում է համայնքում պարբերական և հաստատուն աղբահանության իրականացում: Դրա համար նախատեսվում է համայնքում կառուցել 15-ից 16 աղբահարթակներ, որոնցում կտեղադրվեն աղբամաններ: Նախատեսվում է նաև աղբատար մեքենայի ձեռք բերում և աղբի պարբերական հեռացում աղբամաններից :
6. Համայնքի ճանապարհների և ենթակառուցների մասով նախատեսվում է որոշ փողոցների ասֆալտապատում, որոշ մասի շեբենապատում, ինչպես նաև ջրհեռացման առուների վերականգնում և մաքրում:
7. Երիտասանդության ներգրավմամբ նախատեսվում է ակտիվ մշակույթային և մարզական միոցառումների կազմակերպում , ժամանցի կենտրոնների ստեղծում, մարզական և մշակույթային խմբակների ստեղծում:
8. Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային գույքը վարձակալությամբ տրամադելու աշխատանքներ, մասնավորապես համայնքային հողերի , շենքերի ու շինությունների, տեխնիկայի , սարքավորումների վարձակալությամբ տրամադելը: Նախատեսվում է նաև համայնքային սեփականության հողամասերի օտարում ` հասարակական և արտադրական կառույցների համար, ինչպես նաև առևտրի կետերի, հանգստյան գոտիների կառուցման համար:
9. Համայնքի բնակավարի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման մասով նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում՝ ծառատունկ, շենքերի և

շինությունների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ, փողոցների մաքրման աշխատանքներ;

10. Համայնքում բնակարանային շինարարության խթանման բնագավառում նախատեսվում է երիտասարդ ընտանիքներին անհատույց տնամերձ հողամասերի տրամադրում, ցածր տոկոսներով երկարատև վարկերի տրամադրում, օժանդակություն փաստաթղթային, իրավական հարցերում և բարոյական աջակցություն:
11. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է սպորտային միջոցառումների, սպորտլանդիաների անցկացում, սպորտային առանձին խմբակների ստեղծում, միջհամայնքային մրցումների անցկացում:
12. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման համար նախատեսվում է բուժկետի շենքի ձեռք բերում, սարքավորումներով և գույքով ապահովում, ծրագրային կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում և համայնքի բնակչության առողջության պարբերական ստուգման աշխատանքներ բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից:
13. Նախադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսվում է՝ մանկա-պարտեզի շենքի վերանորոգման աշխատանքներ, նոր գույքի և սարքավորումների ձեռք բերում, մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացում և պայմանների բարելավում:
14. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախատեսվում է՝ դասընթացների կազմակերպում, բնակչությանն իրազեկման ազդանշանային սարքավորումների տեղադրում, պարզագույն թաքստոցների կառուցում:
15. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է ռազմահայրենասիրական միջոցառումների իրականացում, բանակային կյանքին վերաբերվող հարցերի լուսաբանում, զինապարտների պարբերական հաշվառում և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցություն:
16. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է սոցիալական նպաստների տրամադրում, ֆինանսական օգնության տրամադրում փարոս համակարգում չընդգրկված, սական սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքներին: Նախատեսվում է նաև բարեգործական կազմակերպությունների միջոցով որոշակի օժանդակություն /անասունների տեսքով, գույքի տեսքով և այլն/:
17. Հաշմանդամներին հասարակական կյանքին մասնակցության խթանման բնագավառում նախատեսվում է համագործակցություն «Խարիխս», կազմակերպության հետ, համանդամների ընդգրկել զանազան հանձնաժողովների կիսմբերի մեջ: Ստեղծել պայմաններ նրան ազատ տեղաշարժի համար/ սայլուղիներ կառուցում և այլն:
18. Անհրաժեշտ է վերանորոգել համայնքի ոռոգման ներքին ցանցը:

19. Բարեգործության խթանման բանագավառում նախատեսվում է արտերկրներում բնակվող մեր հայրենակիցներին պարպերաբար տեղեկացում համայնքի հասարակական կյանքին, խնդիրներին և լուծման ուղիներին: Լայնորեն լուսաբանել համայնքում կատարված ցանկացած բարեգործություն: Կազմակերպել մեծարման ցերեկույթներ: Համագործակցում բարեգործական կազմակերպությունների հետ, ստեղծել բարեգործների անկյուն և լուսանկարների միջոցով լուսաբանել բարեգործների աշխատանքները և ստացված արդյունքները:

5.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարման նպատակն է համայնքային բյուջեի ավելացումը, համայնքային գույքի պահպանումը, իրականացվող ծրագիրը նպատակ ունի համայնքային գույքի մշակույթի տների, սանիտարական հանգույցների վերանորոգմանը և մշտական հոսող ջրով ապահովմանը :

2. Ակտիվ մշակույթային և մարզական միջոցառումները միտված են երիտասարդության ակտիվացմանը, վերանորոգված խաղասենյակի առկայությունը կնպաստի գիտելիքների ավելացմանը, հայրենասիրության բարձրացմանը, առողջ ապրելակերպի ու համայնքին մտածողության բարձրացմանը:

3. Համայնքի ճանապարհների պահպանման և շահագործման ծրագրերի արդյունքում կունենանք 30,0քառ.մետր ասֆալտապատ փողոց, 30,0 քառ.մետր բարեկարգ շեբենապատված ճանապարհ, 10,0մետր վերանորոգված ջրհեռացման առուներ, մաքուր և գրավիչ համայնք՝ բնակվողների և զբոսաշրջիկների համար:

4. Աղետների ռիսկերի նվազեցման և քաղ. Պաշտպանության միջոցառումների շնորհիվ կապահովվի բնակչության անվտանգությունը և բնականոն կյանքի գործունեությունը:

5. Գյուղատնտեսության բնագավառի ծրագրերը նպատակ ունեն գյուղ մթերքների առատության, իրացման շուկայում մրցունակության բարձրացման , բնակչության սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճ հնգամյակի ընթացքում 10-ից մինչև 20 տոկոս:

6. Զբոսաշրջության ծրագրերի նպատակն է բնակիչների սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավումը՝ նախատեսվում է եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճ 15-ից 60 տոկոսի չափով:

7. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման նպատակն է ունենալ փողոցային լուսավորության լապտերների ավելացում 500-ից 600 կետով, ժամանակակից ենթակառուցվածքներով և շինություններով մաքուր՝ աղբահարթակներով և աղբամաններով կահավորված համայնք, որտեղ աղբատար մեքենայով աղբը պարբերաբար հեռացվում է համայնքից:

8. Անհրաժեշտ է վերանորոգել համայնքի ոռոգման ներքին ցանցը:

5.3 ՀՀԶՄ ֆինանսավորում

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1. Զբոսաշրջության զարգացման խթանումը Աշտարակ համայնքում–անհատ ձեռնարկատերերի, կազմակերպությունների և բնակիչների ֆինանսական միջոցների հաշվին

2. Աղբահանության կազմակերպումը համայնքում–իրականացվում է համայնքային կազմակերպության միջոցով՝ համայնքի ֆինանսավորմամբ և ներդրումներով:

3. Փողոցային լուսավորություն –իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով

4. Գյուղատնտեսության զարգացման խթանումը համայնքում–տեխնիկայի ձեռք բերում – իրականացվում է միջազգային կազմակերպությունների և համայնքի կողմից 10% ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:

5. Գյուղատնտեսության զարգացման խթանումը Աշտարակ համայնքում–արոտների բարելավում – իրականացվում է միջազգային կազմակերպությունների և համայնքի կողմից 10% ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:

8. Սանիտարական հանգույցների վերանորոգումը իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով

9. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը իրականացվում է համայնքի բյուջեի պաշտոնական դրամաշնորհների՝ պետական բյուջեից և այլ աղբյուրներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների տեսքով (սուբվենցիաների) միջոցներով:

Համայնքի զարգացման ծրագիրը իրականացնելու նպատակով կոնկրետ ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսվում է համագործակցել պետության, ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների, բարերարների հետ:

5.4 ՀՀԶՄ մոնիթորինգ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն կտա հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն կիրականացվի համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով:

Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկությունները պետք է հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով:

5.5 Եզրափակում

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով Աշտարակ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից՝ շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2022-2026թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել՝ որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

Համայնքապետարանի բաժինները և ծառայությունները կմշակեն իրենց բնագավառի զարգացման կոնկրետ ծրագրեր, որոնք կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն, մարզպետարան: Լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

ՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք տարիների գործունեության ուղեցույցը:

2022-2026թթ. ընթացքում ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար համայնքը սերտորեն և արդյունավետ համագործակցի պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2019-2023թթ. ընթացքում ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի

ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը:

ՀՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

1. Հավելված Գծապատկեր 4. Համայնքի զարգացման անմիջական նպատակները

